

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿԱՈՅ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես ըստ. 1923, էջ 381)

ԾԶ.

Հայ ծիսական հարցերու շուրջ իբր նոր վաւերացումներ մը կը ներկայացնեն հետեւեալ գիրը Ամենէն աւելի ուշագրան է՝ պատարագի ճաշակումէն առաջ ներմուծուած Սրբութեան ի Բազմոցի հանդէսը:

Փերսպոլիսի Տէառն Տէառն Մխիթարի Արքայնորդ միւրոյ
գերազանցի Աստուածաբանութեան վարդապետիդ, ողջոյն սիրոյ և յարգութեան

. . . Խոյ տէր մելքիսէզն եկեալ ձգեաց զայս դուղուլէս ի Կոստանդնուպօլիս, թէ սուրբ Ժողովն տէստուր ետ ջահկցոց խորհրդատեարովն պատարագել և պաթալ եղեւ հայոցն: Դեռ ասէ. ոմանք ուսան զփիլիսոփայութիւն, և ոմանք զպաթալութիւն¹. Իսկ ես ստացայ ասել զժամերգութիւնն և զխորհրդատեարն ջահկցոց. նաև ի վերջն նախ քան զճաշակելն սրբութեան ի պատարագին դնէ զսրբութիւնն ի ճառագայթին և այնու իսպառնքէ զժողովուրդն, և ապա ճաշակէ, յորմէ ոմանք տգէտք տեսեալ զարմանան և ոմանք զայթապկոյն. . . . Եւստիցիս տարուշ մինչ պուստացի յովսէփ վ.ն և տիրկէր յակոբ վ.ն զծնունդ տեառն Նոր տումարովն արարին, յօհան վ.ն թաղիր անել ետ վթարին և Եփեմ և զոյ. փէնա². Բայց յայս տարուշ զեպիսկոպոսի միտն դարձոյց և նոր տումարով Եփեմն արար ի սուրբ անդուն եկեղեցւոյ ձայնաւոր պատարագաւ և հարիւր հայ տիրացուներով: Եթէ այսպէս է՝ մեզ ևս թող տէստուր տան Նոր տումարով անել, քանզի և ժողովրդեան մեծ մասն ևս նոր տումարով վարին, հայելով ի հայ կարգաւորաց վարին Նոր տումարով. եթէ կամիք զրեցից զայս բանս սուրբ ժողովին. բաւ է. ողջ լերուք ի տէր:

1734

դեկտ. 27

[Վ. Պոլիս]

Ն. Երոյ. Տէրութեան Ձեռնոյ

Թոմաս Վ. Թէոդոսեան,

ԾԷ.

Հետեւալ կոնդակին հեղինակն է Արքահամ Բ. Կաթողիկոս Էջմիածնի «Ի գեղջէ Խոշարայ յերկրէն Վանայ». կը կոչուի նաև մէկից և քիւրտիստանցի, Մշոյ Ս. Կաթողիկոսին առաջնորդ եղած բլլալուն համար³:

Արքահամու Կաթողիկոսութիւնը տեւած է չորս տարի (1730-1734):

1. Զարասանութիւն:

2. Բեռն = պատիժ, տուգանք:

3. Զամէն. Պատմ. Հայոց. Գ. էջ 803:

Է

ՅԻՍՈՒՅԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Տէր Աբրահամ յօգնաթախիծ կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարք Վատրիշապատու Լուսակառոյց և Տիրանկար Սրբոյ և մեծի երջանկազարդ Աթոռոյս Էջմիածնի:

Յոր մեզ հոգևորական միարար սէրն և գեուսածնաւանդ ողջոյնն և զաստուած սուրբ հոգւոյն զձեր և զսուրբ գահիս զպարգևսն և զլուսատուին մերոյ շնորհաբաշխ սուրբ Աշոյն զչնորհն, հանգերձ եռանդեռտ կաթողին ըղձիւ և խանդակաթ բաղձանօք ընծայեալ նուիրեմ ի վերայ երջանկապատին սիրելւոյդ իմոյ, և հարազատ նազելի զաւակիդ մորս լուսոյ, օրհնեալ բազմածողով քաղաքիդ Եւդոկիոյ Հեղինակ Մինաս Աստուածաբանու թեանն վարդապետիդ և Արհիպանծ եպիսկոպոսիդ ի տէր խնդալ մեծաւ արգասատու թեամբ և բնաւին խաղաղութեամբ, ի լուռեալ երկնաւորին խնդութեան. նաեւ հարցազըն, նեմ զիարդն և զօրպէսն քոյոյ բարեպէս կնելոյդ, զոր տէր անփորձ պահեսցէ և փրկեալ ազատեսցէ ներքնոց և յարտաքնոց ձախողակի կրից ի փառս եկեղեցւոյ իւրոյ. ամէն:

Եւ ընդ սիրառաքի ողջունանութիի քարտեկիս ծանիցէ յօգնիմաստ գիտութիւն վսեմազարդիդ, զի ծիր սիրոյ սիրելւոյդ իմոյ ժամանեալ եհաս առ իս՝ և ընթերցեալ ծանեալ[յ] զհամայնսն զոր ինչ ի նմա բացերեկոց էր մշտնաորակիւ. վասն որոյ սիրելի նախ ասեմ Լուսահոգի ֆիլիպպոս վարդապետի կողմանէ զլուռիդ ողջ լինի. հոգւով սրբով միխթարիս. աստուած իւր հոգին լուսաւորէ, և ԲԺ.ան վարդապետացն սրբոց դասակից և պսակակից արասցէ. ամէն: Նա ևս սիրելի իզմիրու առաջնորդական կնելուրի կողմանէ զոր գրեալ էիր, իբր թէ տարինն ի՛նչ քէսայ կնելուր կը լինի. զի այս վասն նախանձու գրեալ են իզմիրիքիք, գիտեմ նազելի և լուեալ եմ ի բնէ անտի Հայրապետ Սիմէօն և Մանուէլ լուսահոգի վարդապետաց իիզմիրու ի սուրբ գահ հասուցեալ կնելուրն. և քոյդ եւս գիտեմ որ քան զնոցա առաւել է, մանաւանդ գեղեցիկ շուրջառն և զաւագանն հանդերձ և այլ պատուական իրօքն և ընծայիւք զոր յղեալ էիր առ իս. սոքա եւս յաւեւ լորդութեանն յաւելորդն է, և գիտէ տէր որ ճշմարիտ քոյն քան զնոցա աւելի, բայց իզմիրիքիք զայն նախանձու գրեալ են առ իս. վասն որոյ յետ քանից աւուրցն նոցա գիր հասարակ գրելոց եմ ըստ գրեցելոյ քում, և կոչելով զնոսա ի սուրբ գահս դատաստան վասն միոյ ամենան ի՛նչ քէսայի կողմանէ. և դու սիրազունդ իմ լեր այտու ամենայնիւ անհոգ և միամիտ. զի զբապեղքն անկանելոց են ի խորխորատ՝ ըստ սաղմոսին. ողջ լեր տերամբ յիսուսիւ, ի շնորհ տեսուն հանդերձ պաշտական մանուէլիդ. և ընդ քեւ հովաւ նաւորեալ ժողովրդական երամովքդ. Ամէն: Գրեցաւ ՌձՁԳ Թվին յուլիսի ԺԴ, առ գրան մեծի վեհարանիս սուրբ Էջմիածնի:

[1734]

[Աբրահամ կթղկս, ամենայն Հայոց]

Դարձեալ զայս ևս ծանիր սիրելի. զի լուսահոգի փիլիպպոս վարդապետի զամենայն ինչսն եթէ զգեստն, թէ շորեղէնն և թէ նազտն և թէ վէճն ի քեզ է յանձին. նաեւս սուրբ երեւումի վանքն հանգերձ միաբանիւքն ևս ի քեզ յանձին, տեսնում զքո հարազատ սիրելութիւնդ թէ որպիսի հոգսունակութեամբ տիրութիւն անելոց եւ վերոյ գրեւոցս. զի յետ քանից աւուրցն նոցա ևս միխթարական գիր գրելոց եմ. որպէս որ հասարակ ակնայ քաղաքի ժողովրդեանն գրեցի և յղեցի ընդ մեր յովսէփ վարդապետին. կրկին լեր ողջ քրիստոսիս տերամբ մերոյ. Ամէն:

ԾԸ.

Ահնարկութիւնը՝ որով կը սկսի մեր հետազայ նամակը՝ Ռուստիոյ Աննա Գուր-լանտիոյ կայսրուհւոյն մասին է (1730-1740): Սա դուստր էր Մեծն Պետրոսի եղբոր

իւլան Հինգերորդի: Իր ամուսինը Փրեդերիկ-Գուլիէլմուս Ղուքս Գուրլանտիոյ տարի մը վերջ կը մեռնի: Արքունի թագը Աննայի կ'ընծայուի՝ գաղտնի գերագոյն խորհուրդին կողմանէ, փոխանակ ըստ օրինի Մեծն Պետրոսի զստեր տալու:

Վաւերացութիւն թուականի շրջանին մէջ տեղի կ'ունենայ Լեհաստանի յաջորդութեան կռիւը. ճիշդ այդ է որ կ'ականարկուի նամակին մէջ:

Հ. Եղիա կը նշանակէ նաեւ զանազան նորալուրեր ժամանակակից կեանքէն՝ առևտրական խնդրներու և ուրիշ քաղաքական գէպքերու շուրջ:

Գիրայարգեցելոյ և վսեմագունեղի տեսան տեսան Միտրարայ
վարդապետի Աստուածաբանութեան, և Աբրայ Հօրն մերոյ

. . . Մօսկովոյ ռէճիան, որ այժմ անկախ յումնքէ թագաւորէ, յղեալ է նա կայսերն՝ իբր նշան սիրոյ գերիս սամուր քիւրքս, նաև վասն վեցից տանց զարդարանք, և սոյն զարդարանքն խաթայու է, այսինքն չինիմանիւ, նաև այլք իրք մեծագինք, և գինք սոցին արժեն չորս միլեօն: Եւ ի վերայ այսր ամենայնի Եթ [50 000]³ գինուորք ևս յղեալ է ի ռէնեօ ընդդէմ ֆրանսըզի զօրուն: Նալուանի որդւոյն խոստացեալ է պահել զլէհէստան, և զօրքն սակսոնի գնացեն ի ըւհնեօ, և այժմ ի լէհէստան ի խաղաղութեան է, զի այնք որք էին ապստամբ[ք], նոքա ևս զներուսն խնդրելով ի թագաւորէն հնազանդեցան նմա: Ոմն վաճառական եկն աստ ի յիզմիրու, և պատմեաց թէ ներ տաճկաց զոյ մեծ իմն խոռվութիւն պատճառաւ կարմիր գտակին. յենիշէրքն ոչ կամին գնալ ի յարեւելս ընդդէմ պարսից: Ի յիզմիր 40 տրամ հաց 1 ստակ, և մսի օխան 2 փարայ, այն ևս է լրար: Ի պաղտատ ալուրի քիլէն 500 դռն ելեր է, քիլէն 90 ոխայ է: Բազումք ի սովէ և ի ջրոյ մեռեալ են: Մեծագոյն յոյս զոյ հաշտութեան, և ի բերանս բուրից անձանց, թէ աստ իցէ և թէ ի վէնա սոյն է, ապա թէ ոչ, մեծագոյն արինանհղութիւն լինելոց է յերկոցունց կողմանց: Ի վէնա 34 տեղ սօլտատ գրեն, իսկ աստ և ի յայլ տեղիս ձիաւոր գատանայ: Զօրքն թագաւորին մերոյ նպաստութեամբ այլոց իշխանաց կարի յոյժ բազմաթիւք եղեն յայս անգամ ըստ որում համբաւեն...

Ն. Ծ. Եղիա՝ վարդապետ

1735 ապրիլի 1

[Պելկրատ]

ԾԹ.

Մաճառ անօրէն յարձակում մ'է որ կը տեղեկագրուի Հ. Մանուէլի հետագայ նամակին մէջ:

Այդ մասին՝ շարաթ մը վերջ համառօտիւ Հ. Եղիա ևս զբաժ է այսպէս. « Ոմանք « մաճառը ապստամբեցան և զմեծագոյն ֆնաս հասուցին գիւղորէից, և մանաւանդ « կեռիցւոց, ոչ թէ զքաղաքս նոցին աւերեալ կողոպտեցին զինչսն, այլ զոմանս ի « վաճառականաց նոցին ըմբռնեալ կողոպտեցին, և զեզինս իւրեանց կերին, և որքան « զբազմութենէ նոցին համբաւեն, ոչ են այնքան, և ոչ զոյ երկիւղ, զի բազումք

1. Կարուստ Զ. կայսր Աւստրիոյ:

2. Պատմութիւնը կը նշանակէ 20 000:

« տրակոն, նաև ոսցի կատանայք զնացին ընդդէմ նոցա, և զմասն ինչ ի նոցանէ
 « սպանենն և զմանա ըմբռնեալ բերին ի թմուռառու բերրն » (Գր. 1735 Մայիս
 19 [Պէրկրատ]):

Գերարգեցնոյ հօրդ իմոյ քաղցրագունեղ սրտիս
 փեկոցմունք տրտմախտաունք

... մեր հայոց մէջէն զոն բազումք դրամատեարք որք ձ[հարիւր]աւորք եզինք
 զնեն և հայր թէոզորոսն լաւ գիտէ որ ի մեծ մանարիտան խոտաւէտ տեղեանք զոն,
 անդ պահեն և գիրացնեն զեզինքն. և այս մայիսի Բսն կամ Գն ոչ գիտեմ, թէ զինչ
 լուեալք անհաւատ մանարք և թշնամիք հայոց՝ յանկարծ սրտապնդեալ բազումք որպէս
 թէ ապտտարք կայսերն համարձակեալ մտեալք են բազումք հեծելօք ի փոստան և
 արձակեալք ի վերայ հայոց, մանաւանդ կէտլէցոց. զբնաւ ձիանքն և եզինք բազումք,
 այլ և զբովանդակաց զգրամքն, զհանդերձսն և զայլ ամենայն ինչ զկահս և զկարասիս
 թողեալք զնոսին մօրէ մերկ և զնացեալք. Եկ և տես քաղաքիս լացն և երկիւղն, և այժմ
 նոյն Պէշ զնացօղք ևս՝ ի յերկիւղէ դադարեցան ի զալիս վերջապէս ո՞վ գիտէ թէ որ
 զօրանայցէ տէր գաւառացս, կարէ լինիլ թէ թերեւս...¹, և թէ ոչ գիտութիւն լիցի,
 զի ոչ մնայ ազգն մեր թարց գերութեան և սպանեցման բազումք, տեսցէ տէր և ողոր-
 մեսցի: ... հաւես ի կէտլէյու առեալ եմ ի տէր մինասէն հաստատ վկայութիւն, զի նա
 տարին Ա անգամ կամ Բ տարին մի անգամ կու գայ աստ հրամանաւ եպիսկոպոսին
 վիզիթացիա, առ ի քննել զքահանայս և զժողովուրդս...

Մնամ պատրաստական ծառայ

Հ. Մանուէլ [Խուպեսէրեան] կրօնաւորս

1735 մայիսի Ժին գրեցի

[Կէսլա]

(Շարունակելի)

Հ. Ղ. ՏԱՏԵԱՆ

1. ԱՆԸԹԵԽՆԸԼԻ Է ԲԱՌԱ, ԳԵՏԱԿԵՐ ԸԼԼԱԼՈՎ ԿԻՍՈՎ ԼՈՒՓ:

Լուսնակը ձեր տոռներուն վրայ կը ժրպտէր
 Երեկ, աշօր չի փռնտռեր, չի նայիր, լուռ
 Կ'անցնի կ'երթայ. գերեզմաններ ոչ աներ
 Սլէկ տեղ. յարկ մը չըմբռնաց կանգուն՝ ոչ
 Լուսնակը ձեր տոռներուն վրայ կը ժրպտէր:

ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐ

ՆՈՐ ԵՐԳԵՐ

«Հետաւոր եղբայրներուս»

Թրգմ. Հ. Ա. Ղ.